

Միջազգային տնտեսության զարգացումները և անդրազգային ցանցերի զգալի դերը

Ես բավականին նեղված եմ, որովհետև կուզենայի ձեզ նկարագրել, բայց քիչ առաջ իմացանք մեր իշխանությունների նկարագրությունը և չգիտեմ, թե ինչպե՞ս պետք է հաջողացնեմ հարմարվել իրենց եզրակացություններին, բայց բարեբախտաբար ինձ իրավունք տրվեց շարունակել այնպես, ինչպես ես սկզբից էի ցանկանում, և պետք է ավելի համարձակ և իրատես լինենք, և ես պիտի փորձեմ այս ձևով շարունակել ձեզ հետ:

Նախևառաջ, կարծում եմ, որ արդյունավետ երկխոսություն ունենալու համար՝ պետք է տեսնենք՝ որն է միջազգային տնտեսության ընդհանուր իրավիճակը:

Ըստ միջազգային հիմնադրամի և համաշխարհային բանկի տվյալների՝ մինչև 2020 թվականը աշխարհի տնտեսությունը բավական կայուն պետք է լինի և միջին ՀՆԱ-ն պետք է լինի 1,5%-2%:

Եվրոպական Միությունը պետք է ունենա 1,5% միջին զարգացման, Ռուսաստանը, որը մեզ համար շատ կարևոր է նույնպես, իսկ Չինաստանը և Հնդկաստանը՝ 5%, 6%, 7%:

Ուրեմն, կարող եմ ասել, որ ապագան թե՛ մեզ համար, թե՛ մեր ծրագրերի համար նպաստավոր է: Միևնույն ժամանակ պետք է ընդունենք, որ մարդկությունը ևս ունի անկյունաքարային դեր: Արդեն սկսել եմ ծանոթանալ հայկական տեխնոլոգիաներին՝ ռոբոտիկա և այլն: Ուրեմն կարող ենք ասել, որ Հայաստանը, ինչպես քիչ առաջ մեր իշխանությունը ներկայացրեց, կարող է ունենալ կարևոր դեր:

Այնպես որ, հիմա անցնենք Հայաստանին.

Առաջին եզրակացությունը հետևյալն է՝ պետք է անկեղծորեն ասեմ, ես կարծում եմ, որ մենք չպետք է միամիտ լինենք: Եկեք գնահատենք կամ քննադատենք, ինչպես կուզեք, Հայաստանի վերջին տվյալները.

Առաջին հարցը, որ մեր շուրթերից դուրս է գալիս, հետևյալն է՝ Սփյուռքը որտե՞ղ է: Սա կարող եմ ասել, որ հուսադրելի է, և ես կուզենայի լուսաբանել այն ամենը ինչ հիմա կասեմ.

Հայաստանի և զարգացած երկրների միջև տարբերությունը նվազեցնելու համար պետք է, որ Հայաստանը տարեկան ունենա միջին զարգացում՝ ՀՆԱ-ի 7%-ի չափով:

Ինչպես տեսանք, ՀՀ վարչապետը և կառավարությունը մտածում են, որ 5%-ը բավական է, սակայն, իմ կարծիքով, բավական չէ այդ 5%-ը:

Եթե Հայաստանը զարգանա 5%-ով, իսկ Գերմանիան՝ 1,5%-ով, տարբերությունը կմեծանա, ոչ թե կնվազի: Այդ 7%-ին հասնելու համար պետք են մի շարք

փոփոխություններ մեր արտաքին քաղաքականության մեջ, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման մեջ:

Վերջին տարիներին, ես ասում եմ այն մարդկանց համար, ովքեր տեղյակ չեն, բայց ես վստահ եմ, որ բոլորը, մասնագետ լինելով, տեղյակ են, որ ՀՆԱ-ի միջին զարգացումը մոտավորապես 2-3% է, և անցյալ տարի բավականին աննպաստ տարի եղավ Հայաստանի համար, որոշվեցին ՀՆԱ-ի արդյունքը զրո ամբողջ ինչ-որ թիվ եղավ: Այս տարի հույս ունենք, որ զարգացումը կսկսվի 3%-ով: Միևնույն ժամանակ պետք է ընդունենք, որ գործազրկությունը զարմանալիորեն բարձր մակարդակի վրա է. մի կողմից արտագաղթ, մյուս կողմից գործազրկություն: Մենք տեսնում ենք, որ այդքան երիտասարդներ են գաղթում, եթե նրանք չգաղթեն գործազրկությունը ավելի է ավելանալու: Միջին գործազրկությունը վերջին տարիներին 16%-17% է, և հույս չկա, որ այն կնվազի, որը շատ է Հայաստանի համար, մանավանդ, որ բյուջեն չունի բավարար միջոցներ անգործ մարդկանց համար: Ես սրա համար եմ հարցնում, թե որտե՞ղ է սփյուռքը:

Այսօր մեր գործակիցները, հույս ունեմ, որ ապագայում գործակից կլինենք, նշեցին, որ տվյալները լավատեսական են:

Անցյալ տարվանից մինչև այս տարի սփյուռքը 26%-ով մեծացավ, և վերջին տարիների արդյունքները ցույց են տալիս, որ այդքան լավատեսության պատճառներ չունենք: 2008 թվականին, երբ 1 միլիարդ դոլար էր ներդրումը, իսկ 2016 թվականին այն հասավ 120 միլիոն դոլարի: Այսինքն, մոտ ութ անգամ նվազեց օտար երկրների ներդրումը Հայաստանում:

Ուրեմն հիմա, երբ 28%-ով բարձրացել է, իսկ անցյալ տարի 50%-60%-ով նվազել էր, այնքան էլ լավ լուր չի: Պետք է նշեմ, որ օտար ներդրումը Հայաստանում կազմում է ՀՆԱ-ի 1%-1,5%-ը, և զարմանալին այն է, որ մեր սփյուռքահայ երկրներից չի գալիս. ոչ՝ Ֆրանսիայից, ոչ՝ ԱՄՆ-ից, այլ գալիս է Լյուքսեմբուրգից, Շվեյցարիայից և Արգենտինայից:

Ես հարցրեցի վարչապետին, բայց վարչապետը ինձ դիվանագիտական ձևով պատասխանեց: Ես հարցրեցի, թե որո՞նք են Եվրասիական տնտեսական միության որոշումների արդյունքները, և պետք է նշեմ, որ արդյունքները այդքան էլ լավը չէին:

Ես ռումինահայ եմ, և երբ Ռումինիան ԵՄ-ի մեջ մտավ, շուրջ 7 տարի բանակցություններ ունեցանք՝ 1999-2006 թթ.: Ես մտածում եմ, արդյոք ի՞նչ բանակցություններ տեղի ունեցան Հայաստանի և ԵԱՏՄ-ի միջև, քանի որ, երբ Հայաստանը մտավ ԵԱՏՄ, ռուսական ներդրումները նվազեցին: Ես մտածում էի, որ հետո Ռուսաստանի, Ղազախստանի մոտեցումը դեպի Հայաստան պիտի նպաստավոր լինի: Դժբախտաբար, 2016 թվականն ամենավատ տարին եղավ՝ 2008-ից հետո, իսկ

կապերը ԵՄ-ի հետ տկարացավ: Ես կարող եմ ընդունել, որ այս որոշումը քաղաքական արդարացումներ ունեցավ, բայց կարծում եմ, որ Հայաստանի իշխանությունները պետք է լուրջ վերաբերվեն այս հարցին և բանակցեն ԵԱՏՄ անդամ մյուս երկրների հետ, որպեսզի այս համագործակցությունն արդյունավետ լինի:

Հիմա, ես կարծում եմ, որ սփյուռքը այլևս չի կարող սպասել. պետք է Հայաստանին օգնենք գոնե մինչև 2020 թվականը, որպեսզի ՀՆԱ-ի միջին զարգացումը 2%-3% աճ ունենա: Հայաստանը չի կարող զարգանալ, Հայաստանը չի կարող ապրել 350 դոլար միջին աշխատավարձով, մինիմում աշխատավարձը 100 դոլար է: Արդյո՞ք կարող է մարդն ապրել 100 դոլարով: Մի շարք ապրանքներ, որոնք ներմուծվում են Հայաստան, գրեթե նույն գինն ունեն:

Մեզ համար՝ սփյուռքի համար, սուրբ պարտականություն է, որ հույս դնենք Հայաստանի զարգացման զարթոնքի վրա: Ես ընդունում եմ այն, ինչ ասաց Արամ Կաթողիկոսը, որ չխոսենք միայն թալանելու և գործարար հարցերի մասին, այլ խոսենք բարոյական և հայասիրության մասին, ընդունելով դա՝ ես էլ ասում եմ՝ չխոսենք միայն բարոյական և հայասիրական հարցերի մասին, այլ նաև խոսենք տնտեսական հարցերի մասին:

Հիմա անցնեմ սփյուռքին. մեզ՝ ռումինահայերի համար, շատ տխուր լուր եղավ, որ Մելքոնյան վարժարանն ենք կորցրել: Ամբողջ աշխարհում գրքեր ենք կորցնում, դպրոցներ կորցնում, ավանդական հաստատություններն այլևս մոռանում են, թե որտեղից են բխում՝ օրինակ «Գյուլբենկյան» հաստատությունը: «Գյուլբենկյան» հաստատությունն արդեն կամաց-կամաց հայկական չէ: Փոքր բաժին է գործում, որը փորձում է հայկական ծրագրեր իրականացնել: Ես կարծում եմ, որ գործարար մարդիկ մեծ պարտականություն ունեն. թե՛ շահույթ ունենալու, թե՛ սփյուռքին և Հայաստանին օգնելու: Ինչպես երեկ, երբ տեղի ունեցավ Համահայկական Համաաշխարհային ժողովը: Ես ձեզ պարզորեն ասում եմ, որ այս միացյալ ծրագիրը չի կարող գոյություն ունենալ, եթե Հայկական Առևտրական ցանցը չլինի: Առանց այս տեսակ ցանցի, որը համագործակցության մեծ շրջանակ ունի, հնարավոր չէ, օրինակ «Խոստում» ֆիլմը, որը ֆինանսավորել էր Քըրք Քըրքոբյանը շուրջ 80 միլիոն եվրոյով: Ուրեմն կարելի է ինստիտուցիոնալ համագործակցություն ունենանք: Սրա համար եմ ասում, որ այս հարցը լրջորեն քննարկենք: Ամեն մի երկիր պետք է ունենա իր առևտրական պալատը: Սփյուռքի ամեն մի երկրի առևտրական պալատը պետք է միանա Հայաստանի Առևտրական Ցանցին, չստեղծենք ուրիշ բան և գնահատենք այս մարդկանց աշխատանքը և մոտենանք իրենց:

Ես կարծում եմ, որ այս այժմեական աշխարհում ամենակարևորը տեղեկությունն է և տեղեկության փոխանցումը, այնպես որ, մենք պետք է աշխատենք գտնել և օգտագործել հնարավորությունները և ցույց տանք աշխարհին, որ այսօր կարող ենք

լինել այնպես, ինչպես 500-600 տարի առաջ, երբ մեր գործարար մարդիկ մեծ մշակույթ տվեցին, որովհետև ինչ ունենք հիմա, այդ մարդկանց շնորհիվ է: Սրա համար ես քաջալերում և շնորհավորում եմ և պետք է շարունակենք և կազմակերպենք Հայկական Առևտրային Ֆորումը և համագործակցենք մտերիմ ձևով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ:

Շնորհակալություն:

Վարուժան Ռսկանյան
Ռումինիայի խորհրդարանի անդամ